

ԻՆՉՊԻՍԻՐ ՕՐԵՆՔ Է ՊԵՏՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Հիմնաբառեր. գյուղատնտեսություն, կազմակերպատիրական կարգավիճակ, օրենք, պետական քաղաքականություն, կարգավորում, մշտադիտարկում

Հայաստանի Հանրապետության ագրարային բարեփոխումների իրականացումից անցել է մոտ երեք տասնամյակ, սակայն գյուղատնտեսության ոլորտի օրենսդրական դաշտը դեռևս անկարգ է մնում: «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի բացակայությունը խոչընդոտում է համապատասխան ապրանքարտադրող սուբյեկտների կազմակերպատիրական ձևերի հստակացումը, ոլորտի քաղաքականության և պետական աջակցության իրավահարաբերությունների կանոնակարգումը, գյուղատնտեսական հողերի լիարժեք և աղյուսավեպ օգտագործման կառուցակարգերի կիրառումը:

Հողվածում, հիմնվելով միջազգային փորձի ուսումնասիրության վրա, շեշտադրվում է «Գյուղատնտեսության մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացվում են վերոնշյալ հիմնախնդիրների իրավական կարգավորման ուղիներ: Ըստ արժանվույն գնահատելով ՀՀ կառավարության՝ կրոնավիրուսային համաճարակի հետևանքների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները, միաժամանակ, նշվում է, որ դրանցում սահմանված աջակցության գործիքների ժամկետը լրանում է 2020 թ. դեկտեմբերի 31-ին: Մինչդեռ օրենքի մակարդակով դրանք ամրագրելու պարագայում հնարավոր կլինեք ապահովել գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի երկարաժամկետ և կայուն իրականացում:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի իրավահարաբերությունները բազմազան են և կարգավորվում են տարբեր



**Սամվել
ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական ասպիրանտ, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պարզամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնտեսի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնտեսի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

իրավական ակտերով¹: Դեռևս 1991 թվականին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը և Հողային օրենսգիրքը, իսկ ՀՀ կառավարությունն ընդունեց ավելի քան չորս տասնյակ որոշումներ, որոնք իրավական հիմք հանդիսացան ագրարային վերափոխումների և հողի մասնավորեցման համար²: Հետագայում՝ 2001 թվականին, ՀՀ Ազգային ժողովն ընդունեց նոր Հողային օրենսգիրք, իսկ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը 2006 թ. նոյեմբերի 28-ին ուժը կորցրած ճանաչվեց: Դրանից հետո մինչ օրս անորոշ է, թե ինչ կազմակերպարական կարգավիճակով են գործում նախկին գյուղացիական տնտեսությունները և ինչ օրենսդրությամբ կարգավորվում գյուղատնտեսական ապրանքարտադրողների գործունեությունը: Բացի այդ, գոյություն չունի որևէ օրենք, որով կկարգավորվի ոլորտի քաղաքականությունը, մասնավորապես՝ պետական աջակցության համակարգը: Դրա բացատրությունն, ըստ էության, այն է, որ կառավարությունը չի փորձում օրենքի ուժով միջամտել գյուղատնտեսության աջակցության համակարգին, քանի որ վերջինս կարող է լրացուցիչ և կայուն բեռնվածություն ստեղծել պետական բյուջեի ծախսային մասի համար: Այլ կերպ ասած, գործադիր իշխանությունն այս առումով խուսափում է կանխավ պարտավորություն ստանձնել և սահմանափակել իր գործունեության ազատությունը:

Ի դեպ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ զարգացած երկրներում գյուղատնտեսության մասին օրենքը հարթ դաշտում չի ընդունվել: Այսպես՝ 1933 թ. ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտի նախաձեռնությամբ կոնգրեսը հաստատել է «Գյուղատնտեսության կարգավորման մասին» հայտնի օրենքը, որը թելադրված

էր 1929 թ. սկսված Մեծ ճգնաժամով և դրա հետևանքները մեղմելու հրամայականով: Ինչպես գյուղատնտեսությունը, այնպես էլ ամբողջ տնտեսությունը հայտնվել էին ծայրահեղ ծանր վիճակում: Օրենքի շրջանակում նախատեսված միջոցառումները կոչված էին հաղթահարելու գյուղատնտեսական արտադրանքների գների աննախադեպ անկումը, ցանքատարածությունների և անասնազխաքանակի վտանգավոր աստիճանի կրճատումը, գյուղական աղքատության խորացումը, գյուղական բնակչության զանգվածային արտահոսքը և հազարավոր ֆերմերային տնտեսությունների սնանկացումը: Ֆ. Ռուզվելտը, ականջալուր լինելով հայտնի տնտեսագետ Ջ. Մեյնարդ Քեյնսի՝ «կապիտալիստական արտադրության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է տնտեսության պետական կարգավորում» գաղափարին, որդեգրեց նոր ուղղություն՝ պետական կարգավորման և աջակցության մի շարք ծրագրեր, որոնց շնորհիվ արդեն իսկ 1939 թ. լիարժեքորեն դրսևորվեց բարեփոխումների արդյունքը:

Հետագայում ԱՄՆ կոնգրեսը հիմնականում չորս տարվա պարբերականությամբ վերանայում էր օրենքը՝ լրացնելով այն պետական աջակցության նոր ծրագրերով և անհրաժեշտ միջոցներ էր հատկացնում դրանց իրականացման համար: Վերջերս (2018 թ. դեկտեմբերին) ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը ստորագրեց գյուղատնտեսության մասին հերթական հիմնարար օրենքը, որով նախատեսվում է առաջիկա տասը տարիների համար ոլորտին հատկացնել 867 մլրդ ԱՄՆ դոլար: Ի դեպ, այս օրենքում, որը բավական ծավալուն է՝ 800 էջ, տեղ են գտել պետական ֆինանսավորմամբ բոլոր ծրագրերը՝ սկսած անասնաբուժությունից մինչև արտաքին շուկա դուրս գալու համար ֆերմերներին ցուցաբերվող աջակցությունը

¹ Առավել առանցքային նշանակություն ունեն Հողային օրենսգիրքը, «Գյուղատնտեսական կրոպերատիվների մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Անասնաբուժության մասին», «Բուսասանիտարիայի մասին», «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին», «Օրգանական գյուղատնտեսության մասին», «Սերմերի մասին», «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին», «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին», «Պարենային անվտանգության ապահովման մասին», «Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին», «Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին» և այլ օրենքներ:

² Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», Երևան, «Հայաստան», 1991, 288 էջ:

(ամերիկյան պարենի ավելի քան 20%-ն արտահանվում է)³:

Գերմանիան Եվրոպայի զարգացած գյուղատնտեսություն ունեցող երկրներից է: Պատմական իրողություն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս պետությունը վերածվել էր ավերակի, որտեղ իշխում էին համատարած սովն ու աղքատությունը: Սակայն, ընդամենը հինգ տարի հետո՝ 1950 թ., այստեղ վերահաստատվեցին արդյունաբերական հզորությունների նախապատերազմական ծավալները: Գյուղատնտեսությունը, այդուհանդերձ, նույնքան արագ տեմպերով չէր վերականգնվում: Ուստի 1955 թ. Ֆերմերների միության ներկայացուցիչները, բանակցելով Գերմանիայի տնտեսական հրաշքի հեղինակի՝ էկոնոմիկայի առաջին նախարար Լյուդվիգ Էրհարդի հետ, առաջարկեցին նրան ընդունել գյուղատնտեսության մասին օրենք՝ դրանում ամրագրելով պետական քաղաքականության սկզբունքային մոտեցումները: Այսպիսով՝ նույն թվականի սեպտեմբերի 5-ին ընդունվեց ոչ միայն «Գյուղատնտեսության մասին» օրենքը, որը գործում է ցայսօր, այլև, որպես պետական աջակցության ծրագրային փաստաթուղթ, «Կանաչ պլանը»: Օրենքի հիմնական առաքելությունն այն էր, որ պետությունը պարտավորվում էր ապահովել գերմանական տնտեսության մեջ գյուղատնտեսության առաջադիմական զարգացումը՝ բարձրացնելով դրա արտադրողականության մակարդակը, բարելավելով գյուղացիների սոցիալական դրությունը, փոխհատուցելով ոլորտին բնորոշ բնական և տնտեսական ռիսկերի հասցրած վնասները: «Կանաչ պլանի» իրականացման մասին կառավարությունը յուրաքանչյուր տարի (1997-ից հետո՝ չորս տարին մեկ) հաշվետվություն է ներկայացնում երկրի խորհրդարանում: Արդեն 1961 թ. պարենի նախարար Վերներ Շվարցը Բունդեսթագում զեկուցեց, որ «Կանաչ պլանի» գործարկումից հետո մեկ զբաղվածի հաշվով եկամուտն ավելացել է 70%-ով և հասել 4000 մարկի: Դա հնարավոր դարձավ 22 մլրդ մարկ կապիտալ ներդրումների շնոր-

հիվ, որից 2,7 մլրդ-ը հատկացվել էր արտադրության միջոցներին⁴: Ներկայում ԵՄ երկրներից Գերմանիան և Ֆրանսիան ունեն ամենազարգացած տնտեսությունը, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալով աշխարհում զիջում են միայն ԱՄՆ-ին և Կանադային: Հետաքրքրական է, որ այդ երկրները, հավատարիմ մնալով ԵՄ օրենքներին ու կանոնակարգերին, միաժամանակ, հատկապես՝ գյուղատնտեսության պետական կարգավորման առումով, առաջնորդվում են սեփական օրենքներով: Ավելին, Գերմանիայում, բացի դաշնային օրենքից, գյուղատնտեսությունը կարգավորվում է նաև յուրաքանչյուր Հողի (վարչատարածքային միավորի) օրենսդրությամբ:

Հետխորհրդային երկրներն անցյալ դարի 90-ական թվականներից հետո, որդեգրելով տնտեսության ազատականացման և ագրարային բարեփոխումների քաղաքականություն, նույնպես ձեռնարկեցին ագրարային ոլորտի իրավական դաշտի կարգավորման քայլեր: Սակայն, մեր դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում վերաբերում են հողային, ոռոգման համակարգերի, սննդամթերքի անվտանգության, պարենային անվտանգության, անասնաբուժության, բույսերի պաշտպանության, տոհմային անասնապահության և այլ հարաբերությունների կարգավորմանը: Ինչ վերաբերում է ագրարային քաղաքականության և գյուղատնտեսության պետական աջակցության իրավահարաբերություններին, այսինքն՝ սուբսիդավորման, համաֆինանսավորման, ուղղակի ներդրումների և սուբվենցիաների գործիքներով երկարաժամկետ և կայուն զարգացման խթանների կանոնակարգմանը, ապա, եթե բացառենք յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքը, օրենսդրական դաշտը գրեթե բացակայում է:

Ինչպես նկատեցինք զարգացած մի քանի երկրների օրինակով, գյուղատնտեսության օրենսդրական կարգավորումը թելադրված էր տնտեսական, սոցիալական և քաղաքական ծանր իրավիճակի

³ Николай Худяков, В США принят новый закон о сельском хозяйстве, «Крестьянские ведомости», 29 декабря 2018 г.

⁴ https://studbooks.net/1196643/agropromyshlennost/struktura_germanii

հաղթահարման հրամայականով: Իմաստուն է ժողովուրդը, երբ ասում է. «Չկա չարիք՝ առանց բարիքի»: Ահավասիկ, Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային համավարակը, կարծես թե, ապացուցում է այդ ասացվածքի ճշմարտացիությունը: Տակավին 2020 թ. մարտի 26-ին ՀՀ կառավարությունը համավարակի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների շրջանակում ընդունեց գյուղատնտեսության պետական աջակցության մի շարք կարևոր ծրագրեր, որոնցից հատկանշական են հետևյալները. գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում, գյուղատնտեսական տեխնիկայի, ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցություն, գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում, 2019-2024 թթ.՝ տավարաբուծության, 2019-2023 թթ.՝ ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման, փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման, խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցություն, ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորում, կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում, փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցություն, ապահովագրական համակարգի ներդրում և այլն: Ընդ որում, նշված ծրագրերն ուժի մեջ են մինչև այս տարվա դեկտեմբերի 31-ը⁵:

Ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ գյուղատնտեսության գործունեության կանոնակարգման, տնտեսավարող սուբյեկտների կազմակերպաիրավական կարգավիճակի լեգիտիմության, ագրարային քա-

ղաքականության գերակայությունների իրավական հիմքերը թույլ են, իսկ պետական աջակցության հիմնարար ծրագրերի կայունությունը և երկարաժամկետ իրականացումը երաշխավորված չէ ու կրում է իրավիճակային բնույթ: Բնականաբար, ստեղծված իրավիճակում նվազում է պետական աջակցության արդյունավետությունը և պետություն-մասնավոր հատվածի համագործակցության կարևորությունը: Այս հիմնախնդիրների լուծման համար կարևորելով ոլորտի օրենսդրական դաշտի զարգացումը, կառավարման լիազոր մարմինը ակտիվացրել է «Գյուղատնտեսության մասին» օրենքի մշակման աշխատանքները: Հեղինակի կողմից նույնպես մշակվել է «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որտեղ տեղ են գտել վերոհիշյալ հիմնախնդիրների լուծման որոշակի դրույթներ:

Նախ՝ առաջարկվող օրենքի նախագծի 13-րդ հոդվածի (Գյուղատնտեսության պետական աջակցության անհրաժեշտությունը, ձևերը և պայմանները) 2-րդ կետով նախատեսվում է. «Տվյալ տարվա բյուջեում գյուղատնտեսության պետական աջակցությանն ուղղվելիք միջոցները չեն կարող պակաս լինել ընթացիկ տարվա համար սահմանված միջոցների և բյուջեն ընդունելու տարվա համար նախատեսված համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճի ցուցանիշի արտադրյալից: Եթե չի նախատեսվում ՀՆԱ աճ, ապա գյուղատնտեսության բյուջետային աջակցությունը չի կարող փոքր լինել նախորդ տարվա հատկացումների ծավալից»:

Երկրորդ՝ նախագծի 18-րդ հոդվածում («Գյուղատնտեսության զարգացման պետական ծրագիրը») նշվում է. «1. Գյուղատնտեսության զարգացման պետական ծրագիրը (այսուհետ՝ պետական ծրագիր) փաստաթուղթ է, որը սահմանում է երեք տարվա ժամանակահատվածի համար տարեկան կտրվածքով գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, պետական աջակցությամբ և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ իրականացվելիք ծրագրերը, դրանց իրա-

⁵ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, Երևան, 2020, 38 էջ, <https://www.mineconomy.am/>

կանացման կառուցակարգերը, ժամկետները, պատասխանատուներին և ֆինանսավորման աղբյուրները:

2. Պետական ծրագրի նախագիծը կազմում են կառավարման լիազոր մարմինը և գործադիր իշխանության այն մարմինները, որոնց գործառույթներն առնչվում են գյուղատնտեսությանը, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Մնացած բոլոր պետական մարմինները, հիմնարկները, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք կարող են մասնակցել պետական ծրագրի նախագծի կազմման աշխատանքներին սեփական նախաձեռնությամբ՝ ներկայացնելով առաջարկություններ և հիմնավորումներ:

3. Պետական ծրագիրը ներառում է գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, ըստ պետական աջակցության ուղղությունների նախատեսվող ծրագրերը, դրանցից ակնկալվող արդյունքները և հետագա զարգացման կանխատեսումները: Նախատեսվող ծրագրերի ֆինանսական միջոցները հիմնավորվում են ըստ աղբյուրների, իսկ ակնկալվող արդյունքները պետք է լինեն չափելի՝ ծրագրային բյուջետավորման ժամանակակից մեթոդաբանության պահանջներին համապատասխան:

4. Պետական լիազոր մարմինը պետական ծրագիրը հրապարակում է իր պաշտոնական կայքում և կատարման արդյունքները ներկայացնում ըստ ուղղությունների՝ ինտերակտիվ բյուջեի ձևաչափով»:

Նախատեսվում է, որ վերոնշյալ ծրագիրը ՀՀ կառավարության հավանությանն արժանանալուց հետո, տվյալ տարվա պետական բյուջեի հետ միասին, կքննարկվի Ազգային ժողովում և որոշակի փոփոխություններով ու լրացումներով կհաստատվի կառավարության կողմից: Միաժամանակ, ակնկալվում է, որ ոլորտի լիազոր մարմինը մինչև հաջորդ տարվա մարտի 30-ը ՀՀ Ազգային ժողովի հաստատմանը կներկայացնի և կհրապարակի գյուղատնտեսության պետական ծրագրի կատարողական

զեկույցը:

Հաջորդ կարևոր հիմնախնդիրը, որը նույնպես լուծում է պահանջում օրենսդրության շրջանակում, վերաբերում է գյուղատնտեսական ապրանքարտադրող սուբյեկտների կազմակերպարավական կարգավիճակի հստակեցմանը: Ինչպես իրավացիորեն նկատում է ի.գ.դ., պրոֆեսոր Տարիել Բարսեղյանը. «... ագրարային հատվածի և այդ հատվածում գործունեություն ծավալող սուբյեկտների (գյուղական ընտանիք, գյուղացիական, ագարակային տնտեսություններ, կոոպերատիվներ) իրավական կարգավիճակի կանոնակարգման իսպառ բացակայությունը կամ խեղաթյուրված կարգավորումը՝ օրինակ կոոպերատիվներինը (ՀՀ քաղ. օր. 117-121-րդ հոդվ.) նրանց զրկում է շուկայական հարաբերություններում որպես լիարժեք սուբյեկտ հանդես գալու և այդ հարաբերությունների ընձեռած առավելություններից օգտվելու հնարավորությունից»⁶: Ուստի՝ «... անհրաժեշտ է օր առաջ մտածել գյուղատնտեսության բնագավառում գործունեություն ծավալող սուբյեկտներին (գյուղական ընտանիք, գյուղացիական տնտեսություն, ֆերմեր, գյուղատնտեսական կոոպերատիվ) շուկայական հարաբերությունների լիիրավ մասնակցի կարգավիճակով օժտելու մասին: Դրա համար նախ՝ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել այդ սուբյեկտների կարգավիճակը կանոնակարգող համապատասխան լրացումներ և փոփոխություններ, ինչպես նաև ընդունել նշված սուբյեկտներից յուրաքանչյուրի քաղաքացիաիրավական և գործարարական կարգավիճակը համապարփակ և մանրամասն կարգավորող առանձին օրենքներ: Այդ ուղղությամբ առաջին քայլը կարծեք թե կատարվում էր: 2010 թ. մշակվել էր «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, սակայն այն մինչ օրս չի ընդունվել, մինչդեռ այդ օրենքի ընդունումը գյուղատնտեսության զարգացման, գյուղացիական տնտեսությունների արգասաբեր գործունեության ապահովման համար կունենար չափա-

⁶ Գյուղացիական տնտեսության քաղաքացիաիրավական կարգավիճակը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, եր., ԵՊՀ, 2017, էջ 145:

զանց կարևոր նշանակություն»⁷:

Այո, օրենսդրական դաշտի անկատարության պատճառով ստեղծվել է այնպիսի մի իրավիճակ, որ Հողային օրենսգրքի իրավակարգավորող նորմերով հնարավոր չէ հիմնովին կանոնակարգել գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման կամ, ավելի ճիշտ, չօգտագործման խնդրահարույց հարաբերությունները: Բազմիցս նշել ենք, որ Հայաստանի սակավահողության և պարենային անվտանգության ռիսկերի պայմաններում ուղղակի անհանդուրժելի է գյուղատնտեսության ոսկե ֆոնդի՝ մշակովի հողերի, ինչպես նաև արոտավայրերի չափազանց ցածր մակարդակով օգտագործումը⁸:

Թերևս, ՀՀ ԱՎԿ տեսանկյունից, միանգամայն տրամաբանական էր «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի ուժը կորցրած ճանաչվելուց հետո այդ տնտեսությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների հրապարակման դադարեցումը: Այդպիսով, կարելի է կարծել, որ 2006 թ. նոյեմբերի 11-ից նման տնտեսություններ այլևս գոյություն չունեն: Մինչդեռ ակնհայտ է, որ դրանք առկա են ֆիզիկապես, բայց ոչ իրավունքի տեսանկյունից: Իհարկե, ճշմարտությունը պահանջում է ասել, որ ՀՀ ԱՎԿ «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005 թթ.» հրապարակման «Բուսաբուծություն» բաժնի «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները բնակչության տնտեսություններում» աղյուսակի վերնագրի վերաբերյալ նշվում է հետևյալ ծանոթագրությունը. «Այստեղ և հետայսու բնակչության տնտեսություններ արտահայտությունը ներառում է գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և բնակչության օժանդակ տնտեսությունները»⁹: Սակայն, ժամանակ առ ժամանակ այդ ընդհանրական հասկացությունը նույնպես փոխարինվում է «բոլոր կարգի տնտեսություններում»

արտահայտությամբ՝ խաթարելով վիճակագրությունը:

Բարեբախտաբար, 2015 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, և նման կարգավիճակ ունեցող տնտեսությունների գործունեության հետ կապված իրավահարաբերությունները կարող են կանոնակարգվել: Սակայն, վիճակագրության առումով, առաջընթաց չունենք, քանի որ ՀՀ ԱՎԿ-ն կոոպերատիվների մասով դեռևս ամբողջական վիճակագրություն չի վարում:

Այդուհանդերձ, վերադառնալով գյուղատնտեսական տնտեսավարող սյուբեկտների կարգավիճակին և նրանց գործունեությանը, պետք է արձանագրել, որ այս դաշտում օրինաստեղծ աշխատանքը գրեթե բացակայում է: Իհարկե, արդարացի չի լինի կարծել, որ այս ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Սակայն, շուրջ մեկ տասնամյակ ՀՀ օրենսդիրները և գյուղատնտեսության ոլորտի գործադիր մարմինը միմյանց են փոխանցում գյուղատնտեսության մասին օրենքի՝ տարբեր անվանումներով նախագծեր՝ չհանգեցնելով վերջնական եզրակացության: Ավելին, վերջերս ավստրիական կառավարության դրամաշնորհով մշակվել է «Գյուղի և գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, բայց վերջինս չի արժանացել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հավանությանը: Ներկայում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մշակվում է նոր նախագիծ, որի լրամշակմանը կարող են նպաստել նաև սույն հոդվածում շարադրվող նկատառումները:

Օրենսդրական կարգավորման անհրաժեշտություն ունեցող կարևոր խնդիր է նաև գյուղատնտեսական ապրանքարտադրողների հաշվառումը և գրանցումը: Այդ նպատակով մեր կողմից առաջարկվող օրենքի

⁷ Նույն տեղում, էջ 146:

⁸ Ս. Ավետիսյան, ՀՀ գյուղատնտեսական հողերի օգտագործման վերլուծություն, <https://asue.am/am/amberd/publications/analytcs>, Բնական պաշարների օգտագործման նորամուծական եղանակների միջազգային փորձը և Հայաստանում կիրառման հնարավորությունները <https://asue.am/am/amberd/research/international-experience-use-natural-resources>; Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները, <https://asue.am/am/amberd/research/urgent-problems-food-security-ra> և այլն:

⁹ ՀՀ ԱՎԾ, Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005, https://www.armstat.am/file/article/selx-oz_2006_02.pdf

նախագծում ներառված է գյուղատնտեսական ապրանքարտադրողների ռեսուրսի գաղափարը:

Հաջորդ հարցը, որ նույնչափ էական է, վերաբերում է գյուղատնտեսական ապրանքարտադրողներին սեփականության իրավունքով պատկանող հողերի օգտագործման նկատմամբ վարչարարության խստացմանը: Աշխարհի ամենաազատական շուկայական երկրներում անգամ հողօգտագործման հարցերը դիտարկվում են ոչ միայն մասնավոր սեփականության իրավունքի, այլև հողի՝ որպես երկրի անփոխարինելի բնական ռեսուրսի պահպանության ու արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Դրա վկայությունն է այն, որ սահմանվում են ագրարային կանոններ, որոնք պարտադրում են հատկապես գյուղատնտեսական նշանակության հողերի ազրոտեխնիկական, բնապահպանական, առողջապահական, տնտեսական և սոցիալական օգտագործման նորմեր:

Մեր կողմից առաջարկվող օրենքի նախագծում ներառված են հետևյալ դրույթները.

«1. Անկախ սեփականության ձևից, գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան օգտագործումը պետական կարգավորման ոլորտ է և օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման համար սեփականատերը և (կամ) իրավասու մարմինը ենթակա է պատասխանատվության:

2. Գյուղատնտեսական մշակովի հողերի արդյունավետ օգտագործումը տվյալ գյուղատնտեսական գոտու բնակլիմայական պայմաններին հարմարված մշակաբույսերի տեխնոլոգիական կանոններին համապատասխան մշակությունն է, հետբերքահավաքային աշխատանքների կազմակերպումը և ստացված բերքի նպատակային օգտագործումը, որի արդյունքում ապահովվում է բարձր եկամուտ:

3. Գյուղատնտեսական գործունեության համար ոչ բարենպաստ տարածքներում, որտեղ բնակլիմայական պայմանների, հողի վիճակի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական գործոնների հետևանքով, համանման գործունեություն իրականացնելիս հա-

մեմատաբար ցածր եկամուտ է ստացվում, ՀՀ կառավարությունը հողօգտագործման և երկրի պարենային անվտանգության գերակայության թելադրանքով իրականացնում է պետական աջակցության նպատակային ծրագրեր»:

Այնուհետև, ի լրումն Հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի, առաջարկում ենք հողերի չօգտագործման դեպքում վարչարարության խստացման հետևյալ պայմանները.

«1) Գյուղատնտեսական ապրանքարտադրողին վարձակալության և (կամ) անհատույց օգտագործման տրամադրված գյուղատնտեսական մշակովի հողը մեկ տարվա ընթացքում ըստ նպատակային և գործառնական նշանակության չօգտագործելու, ինչպես նաև ոչ արդյունավետ և օրենսդրությամբ արգելված ձևով օգտագործելու դեպքում կնքված վարձակալության և (կամ) անհատույց օգտագործման պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

2) Հողի սեփականատիրոջ՝ տնական ժամանակահատվածով (երկու տարուց ավելի) բնակության վայրից բացակայելու և հողամասն անխնամ ու անօգտագործելի թողնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը սեփականատիրոջ հետ կապի առկայության պարագայում, նրա համաձայնությամբ, իսկ կապի անհնարինության պարագայում՝ հարկադիր կարգով, պահպանելով սեփականության իրավունքը, հողամասը մրցութային կարգով տրամադրում է վարձակալության: Հողի հարկը վճարելուց հետո վարձակալական վճարի մնացած գումարը փոխանցվում է հողամասի սեփականատիրոջ անձնական հաշվին, իսկ դրա բացակայության դեպքում՝ համայնքի զարգացման հիմնադրամին»:

Այսպիսով՝ «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակում կարգավորում պահանջող հիմնախնդիրներին սույն հոդվածում կատարված համառոտ անդրադարձն անգամ վկայում է նման օրենքի ընդունման կարևորության և դրա իրականացման հետևողական մշտադիտարկման անհրաժեշտության մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին», Երևան, «Հայաստան», 1991, 288 էջ:
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, Երևան, 2020, 38 էջ:
3. Գյուղացիական տնտեսության քաղաքացիաիրավական կարգավիճակը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Եր., ԵՊՀ, 2017, էջ 145:
4. ՀՀ ԱՎԾ, Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005, https://www.armstat.am/file/article/selx-oz_2006_02.pdf
5. Николай Худяков. В США принят новый закон о сельском хозяйстве, «Крестьянские ведомости», 29 декабря 2018 г.
6. https://studbooks.net/1196643/agropromyshlennost/struktura_germanii

Самвел АВЕТИСЯН

*Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор*

ԱԳՐԱՐԱԿՄԱՆ ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . АГРАРНАЯ ПОЛИТИКА . AGRICULTURAL POLICY . 2020 / 4

КАКОЙ ЗАКОН НЕОБХОДИМ ДЛЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ?

Прошло почти три десятилетия с момента проведения аграрных реформ в Республике Армения, но законодательное поле сельского хозяйства все еще несовершенно. Отсутствие «Закона о сельском хозяйстве» не дает возможности уточнять организационно-правовые формы сельхозтоваропроизводителей, регулировать правоотношения в сфере аграрной политики и государственной поддержки, применять эффективные механизмы для полного и эффективного использования земель сельскохозяйственного назначения.

В статье, основанной на изучении международного опыта, подчеркивается необходимость принятия закона о сельском хозяйстве с целью представления механизмов правового регулирования. Высоко оценивая меры, предпринятые Правительством Республики Армения для преодоления коронавирусной пандемии, одновременно отмечается, что срок определенных в них инструментов поддержки истекает 31 декабря 2020 года. Между тем, если они будут установлены законом, то можно обеспечить долгосрочную и устойчивую реализацию программ государственной поддержки сельского хозяйства.

Ключевые слова: *сельское хозяйство, организационно-правовой статус, закон, государственная политика, регулирование, мониторинг*

Samvel AVETISYAN

*Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor*

ԱԳՐԱՐԱԿՄԱՆ ԲԱՆԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ . АГРАРНАЯ ПОЛИТИКА . AGRICULTURAL POLICY . 2020 / 4

WHAT LAW IS NECESSARY FOR AGRICULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA?

Almost three decades have passed since the implementation of agrarian reforms in the Republic of Armenia, but the legislative field of agriculture is not perfect. The absence of the "Law on Agriculture" makes it impossible to clarify the organizational and legal forms of agricultural producers, regulate legal relations in the field of agricultural policy and state support, and apply effective mechanisms for the full and effective usage of agricultural land.

Based on the study of international experience, the paper highlights the importance of adopting a law on agriculture in order to present the mechanisms of legal regulation. While appreciating the measures taken by the Government of the Republic of Armenia to overcome the coronavirus epidemic, at the same time, it is noted that the support instruments defined expire on 31 December, 2020. Meanwhile, if they are established by the law, it is possible to ensure long-term and sustainable implementation of programs of state support for agriculture.

Keywords: *agriculture, organizational and legal status, law, state policy, regulation, monitoring*